ՀԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ՎԵՐՋԻՆ ՕՐԵՐԻ ՍՐԲԵՐԻ ԵԿԵՂԵՑԻ
ԱՌԱՋԻՆ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿ
47 East South Temple Street, Salt Lake City, Utah 84150-1200

Ապրիլի 2, 2018թ.

Ուղղված է. Բարձրագույն Իշխանություններին, օժանդակ կազմակերպությունների գերագույն նախագահություններին, տարածքային յոթանասունականներին, ցցերի, միսիաների և շրջանների նախագահներին, եպիսկոպոսներին և ճյուղերի նախագահներին, ցցերի և ծխերի խորհուրդներին:

(Ընթերցել հաղորդության ժողովին)

Հարգելի եղբայրներ և քույրեր

Սպասավորել ամրապնդված Մելքիսեդեկյան քահանայության քվորումներով և Սփոփող միություններով

Փրկիչի ծառայությունը մարմնավորում է երկու մեծ պատվիրանները. «Սիրիր քո Տեր Աստծուն քո բոլոր սրտով, քո բոլոր անձով և քո բոլոր մտքով» և «սիրիր քո ընկերին քո անձի պես» (Մատթեոս 22.37, 39): Այդ նույն ոգով Հիսուսը նաև ուսուցանեց. «Դուք նրանք եք, որոնց ես ընտրել եմ ծառայելու այս ժողովրդին» (3 Նեփի 13.25):

Մելքիսեդեկյան քահանայության քվորումների և Սփոփող միությունների ջանքերը կենտրոնացնելու համար սպասավորության վրա, որը Փրկիչն է ուսուցանել, հայտարարում ենք հետևյալ ճշգրտումները.

- **Ծխի մակարդակով՝ Մելքիսեդեկյան քահանայության մեկ քվորում:** Երեցների քվորումների անդամները և քահանայապետերի խմբերն այժմ միավորված են մեկ քվորումի մեջ և ունեն մեկ նախագահություն: Երեցների քվորումն անվանվում է «երեցների քվորում», իսկ քահանայապետերի խմբերի գործունեությունը դադարեցվում է:
- **Ցցի մակարդակով՝ քահանայապետերի մեկ քվորում:** Ցցի նախագահությունը շարունակում է ծառայել որպես քահանայապետերի քվորումի նախագահություն: Այդ քվորումի անդամները միայն այն քահանայապետերն են, ովքեր ներկայումս ծառայում են ցցի նախագահությունում, եպիսկոպոսություններում, բարձրագույն խորհրդում և գործող հայրապետի կոչումներում:
- **Սպասավորությունը փոխարինում է տնային ուսուցմանը և այցելող ուսուցմանը:** Տնային ուսուցման և այցելող քույրերի առանձին ծրագրերն այժմ համակարգված են մեկ ընդհանուր աշխատանքի տակ և կոչվում են «սպասավորություն», որը վերահսկվում է երեցների քվորումի և Սփոփող

Միության նախագահությունների կողմից՝ եպիսկոպոսի ղեկավարության ներքո: Սպասավորությունն ուրիշների մասին Քրիստոսի նման հոգ տանելն է ու օգնելն է, որ նրանք բավարարեն իրենց հոգևոր և նյութական կարիքները:

- **Երիտասարդների ընդգրկումը սպասավորության ջանքերում:** Սպասավորության ջանքերում որպես Սփոփող Միության քույրերի զուգընկերներ կարող են ընդգրկվել դափնիների և համաստեղության դասարանի քույրերը, իսկ քահանաներն ու ուսուցիչները կարող են շարունակել ծառայել որպես Մելքիսեդեկյան Քահանայություն կրողների զուգընկերներ:

Քվորումի ճշգրտումները պետք է իրականացվեն անհապաղ: Սպասավորության ջանքերի ճշգրտումները կարող են որոշ ժամանակ պահանջել, բայց պետք է կատարվեն հնարավորինս արագ: Լրացուցիչ տեղեկության համար այցելեք ministering.lds.org/hye:

Հարգանքներով ձեր՝

Russell M. Nelson

Dallin H. Oaks

Henry B. Eyring

Առաջին Նախագահություն

Սպասավորել ամրապնդված Մելքիսեդեկյան քահանայության քվորումներով և Սփոփող միություններով

ՀԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ
ՎԵՐՋԻՆ ՕՐԵՐԻ ՍՐԲԵՐԻ ԵԿԵՂԵՑԻ

2018 թվականի ապրիլի 2-ի Առաջին Նախագահության նամակի հավելված

Հիսուսի կյանքն ու ծառայությունը մարմնավորում են երկու մեծ պատվիրանները. «Սիրիր քո Տեր Աստծուն քո բոլոր սրտովը, քո բոլոր անձովը և քո բոլոր մտքովը» և «սիրիր քո ընկերին քո անձի պես» (Մատթեոս 22.37, 39)։ Որպես Փրկչի Եկեղեցու անդամներ, ովքեր իսկապես ցանկանում են Նրա աշակերտը լինել, մենք պետք է հետևենք՝ մեր Երկնային Հորը և Նրա զավակներին սիրելու և ծառայելու Նրա հորդորին։ «Եթե ինձ սիրում ես, ծառայիր ինձ», -ասել է Փրկիչը (ՎԵՈՒ 42.29)։ Բենիամին թագավորն ուսուցանել է. «Երբ դուք ձեր մերձավորների ծառայության մեջ եք, դուք սոսկ ձեր Աստծո ծառայության մեջ եք» (Մոսիա 2.17)։ Ալման ամփոփել է մեր պարտականությունը հետևյալ խոսքերով. «նրանք հսկում էին իրենց ժողովրդի վրա և սնուցում էին նրանց արդարությանը պատկանող բաներով» (Մոսիա 23.18)։

Որպեսզի մենք բոլորս կարողանանք արձագանքել ուրիշների մասին հոգ տանելու և ծառայելու այդ աստվածային պարտականությանը, Առաջին Նախագահությունը հայտարարել է հետևյալ ճշգրտումները, որոնք նախատեսված են Փրկիչի ձևով սպասավորելու՝ Մելքիսեդեկյան Քահանայության քվորումների և Սփոփող Միությունների ջանքերը կենտրոնացնելու վրա։ Այդ ճշգրտումները ներառում են հետևյալը.

- **Ծխի մակարդակով՝ Մելքիսեդեկյան քահանայության մեկ քվորում։**
- **Ցցի մակարդակով՝ քահանայապետերի մեկ քվորում։**
- **Սպասավորությունը փոխարինում է տնային ուսուցմանը և այցելությամբ ուսուցմանը։**
- **Երիտասարդների ընդգրկումը սպասավորության ջանքերում։**

Այս ճշգրտումներին աջակցելու համար ծխերում և ցցերում այլևս անց չեն կացվի քահանայության գործադիր հանձնախմբի ժողովներ։ Եթե ծխում հատուկ խնդիր է ծագում, օրինակ, ընտանեկան նրբանկատ խնդիր կամ բարօրության արտասովոր դեպք, ապա այն կարող է լուծվել եպիսկոպոսական ընդլայնված ժողովի ժամանակ։ Պակաս զգայուն մյուս հարցերը կարելի է քննարկել ծխի խորհրդի ժամանակ։ Այն, ինչ կոչվում էր «ցցի քահանայության գործադիր հանձնախմբի ժողովներ» այժմ կոչվում է «բարձրագույն խորհրդի ժողովներ» (տես ստորև 7-րդ և 15-րդ հարցերը)։

Լրացուցիչ տեղեկության համար այցելեք ministering.lds.org/hye։

Ծխի մակարդակով՝ Մելքիսեդեկյան քահանայության մեկ քվորում:

Նախագահ Ռասսել Մ. Նելսոնն ուսուցանել է, որ «պարտադիր չէ, որ հայտնությունը միանգամից գա: Այն կարող է աստիճանաբար գալ»:[1] Քահանայության քվորումների զարգացող իրադարձությունները և քահանայության բանալիների վերաբերյալ մեծացող հասկացողությունն աստիճանաբար հայտնության օրինակներ են: Եկեղեցու պատմության ընթացքում Տերը հաճախ է Իր կամքը տող առ տող հայտնել, աստիճանաբար օրհնելով Իր զավակներին ավելի մեծ հասկացողությամբ այն մասին, թե ինչպես ավետարանի սկզբունքները կիրառել ներկայիս պայմաններում (տես ՎևՈւ 46.15–16):

Տարիների ընթացքում Առաջին Նախագահությունն ու Տասներկու Առաքյալների Քվորումը մտածել են ներքոնշյալ ճշգրտումների մասին: Միայն աղոթքների, քահանայության քվորումների վերաբերյալ սուրբ գրքերի հիմունքների մանրակրկիտ ուսումնասիրության, Եկեղեցու ղեկավարների նախագահության միաբանության միջոցով և այն հաստատմամբ, որ սա է Տիրոջ կամքը, ղեկավարներն առաջ են շարժվել և ծխերի ու ցցերի մակարդակով վերակազմավորել քվորումները՝ ևս մեկ քայլ առաջ գնալով դեպի Վերականգնումը:

1. **Որո՞նք են ծխերի քահանայապետերի խմբերի և երեցների քվորումների ճշգրտումները:**

   Ծխերում, երեցների քվորումների անդամները և քահանայապետերի խմբերն այժմ կմիավորվեն մեկ քվորումի մեջ և կունենան մեկ նախագահություն: Այս քվորումը, որը միասնությամբ և քանակով կմեծանա, կկոչվի «երեցների քվորում», իսկ ծխի քահանայապետերի խմբի գործունեությունը կդադարեցվի:

   Երեցների քվորումը կընդգրկի ծխի բոլոր երեցներին, ապագա երեցներին և այն քահանայապետերին, ովքեր ներկայումս չեն ծառայում եպիսկոպոսությունում, ցցի նախագահությունում, բարձրագույն խորհրդում կամ գործող հայրապետի կոչումներում:

2. **Ինչպե՞ս է կազմավորվում Երեցների քվորումի նախագահությունը:**

   Ցցի նախագահն իր խորհրդականների օգնությամբ կազատի ծառայությունից ներկայիս քահանայապետերի խմբի ղեկավարներին և երեցների քվորումների նախագահություններին: Ապա, ցցի նախագահը յուրաքանչյուր ծխում կկանչի երեցների քվորումի նոր նախագահ և ցցի նախագահը, ցցի նախագահության կցված խորհրդականը կամ նշանակված բարձրագույն խորհրդականը կկանչի այն խորհրդականներին, ովքեր կերաշխավորվեն ծառայելու Երեցների քվորումի նախագահությունում: Երեցների քվորումի նոր նախագահությունը կարող է կազմված լինել տարբեր տարիքի և փորձառություն ունեցող երեցներից և քահանայապետերից, ովքեր միասին կծառայեն մեկ քվորումի նախագահությունում: Քվորումի նախագահը կամ խորհրդականը կարող է լինել երեց կամ քահանայապետ:[2]

3. Ո՞վ է ղեկավարում երեցների քվորումի նախագահի աշխատանքը:

Երեցների քվորումի նախագահն անմիջապես պատասխանատու է ցցի նախագահին, ով ուսուցանում և առաջնորդում է ցցի նախագահության և բարձրագույն խորհրդի միջոցով: Եպիսկոպոսը, ով ծխի նախագահող քահանայապետն է, նույնպես, կանոնավոր կերպով հանդիպում է երեցների քվորումի նախագահի հետ: Եպիսկոպոսը խորհուրդ է անում նրա հետ և տալիս է համապատասխան առաջնորդություն այն մասին, թե ինչպես լավագույնս ծառայել և օրհնել ծխի անդամներին՝ ներդաշնակ աշխատելով ծխի բոլոր կազմակերպությունների հետ: (Տես *Ձեռնարկ Բ,* 7.3.1:)

4. Արդյո՞ք քվորումի կառուցվածքի այս ճշգրտումը փոխում է քվորումի անդամների քահանայության կոչումները:

Ոչ: Իրենց քահանայության կոչումների առումով երեցները մնում են երեցներ և քահանայապետեր մնում են քահանայապետեր: Այնուամենայնիվ, երեցները շարունակում են կարգվել քահանայապետեր, երբ կանչվում են ցցի նախագահություն, բարձրագույն խորհուրդ, եպիսկոպոսություն կամ մնացած այլ դեպքերում, որը որոշվում է ցցի նախագահի աղոթքով մտածելու և ոգեշնչման արդյունքում:

5. Կարո՞ղ է ծխում լինել մեկից ավելի երեցների քվորում:

Այո: Համաձայն Վարդապետություն և Ուխտեր 107.89 հատվածի, երբ ծխում առկա են արտասովոր մեծ թվով Մելքիսեդեկյան Քահանայության ակտիվ անդամներ, ղեկավարները կարող են կազմակերպել մեկից ավելի երեցների քվորումներ: Նման դեպքերում յուրաքանչյուր քվորում պետք է ունենա՝ տարիքի, փորձի, քահանայության կոչումի և զորության ողջամիտ հավասարակշռություն:

Ցցի մակարդակով՝ քահանայապետերի մեկ քվորում:

6. Որո՞նք են ցցի քահանայապետերի քվորումի ճշգրտումները:

Ցցի նախագահությունը շարունակում է ծառայել որպես ցցի քահանայապետերի քվորումի նախագահություն: Այդ քվորումի անդամները միայն այն քահանայապետերն են, ովքեր ներկայումս ծառայում են ցցի նախագահությունում, եպիսկոպոսություններում, բարձրագույն խորհրդում և գործող հայրապետի կոչումներում: Ծխերի և ցցերի գործավարներն ու գործադիր քարտուղարները քահանայապետերի քվորումի անդամներ չեն:

Ցցի քահանայապետերի քվորումի անդամները սովորաբար հավաքվում են երեցների քվորումի հետ, եթե այլ բան նախատեսված չէ:

7. Ո՞րն է ցցի քահանայապետերի քվորումի դերը:

Իր նախագահող դերում ցցի նախագահությունն անհրաժեշտության դեպքում հանդիպում է ցցի քահանայապետերի քվորումի անդամների հետ, որպեսզի քվորումի անդամներին ուսուցանի և աջակցի իրենց կոչումներում: *Ձեռնարկ Բ*-ի, 18.3 բաժնում նկարագրված ցցի ընթացիկ ժողովները շարունակվում են հետևյալ ճշգրտումներով.

- Ցցի քահանայության գործադիր հանձնախմբի ժողովներն այժմ կոչվում են «բարձրագույն խորհրդի ժողովներ»:
- Կարգված քահանայապետերի ամենամյա ժողովն այլևս տեղի չի ունենա: Այնուամենայնիվ, ցցի նախագահությունը կանցկացնի ցցի քահանայապետերի ամենամյա ժողով:

8. Որո՞նք են Մելքիսեդեկյան Քահանայության քվորումների ճշգրտումների նպատակները:

Ծխում Մելքիսեդեկյան Քահանայության մեկ քվորում ունենալու շնորհիվ քահանայություն կրողները միավորվում են, որպեսզի իրականացնեն փրկության աշխատանքի բոլոր կետերը, այդ թվում՝ տաճարային և ընտանեկան պատմության աշխատանքը, որը նախկինում համակարգվում էր քահանայապետների խմբի ղեկավարի կողմից: Այն հնարավորություն է տալիս տարբեր տարիքի և ծագում ունեցող քվորումի անդամներին օգտվել կյանքի տարբեր փուլերում գտնվող մարդկանց տեսակետներից և փորձից: Այն նաև լրացուցիչ հնարավորություն է ընձեռում փորձառու քահանայություն կրողներին ուսուցանել ուրիշներին, այդ թվում՝ ապագա երեցներին, նոր անդամներին, երիտասարդ չափահասներին և Եկեղեցու ակտիվությանը վերադարձող անդամներին:

Այս ճշգրտումներն օգնում են երեցների քվորումին և Սփոփող Միությանը համակարգել իրենց աշխատանքը: Դրանք նաև պարզեցնում են քվորումի համակարգումը եպիսկոպոսության և ծխի խորհրդի հետ: Եվ դրանց շնորհիվ եպիսկոպոսն ավելի շատ պարտականություններ է պատվիրակում երեցների քվորումի ու Սփոփող Միության նախագահներին, որպեսզի նա և նրա խորհրդականները կարողանան կենտրոնանալ իրենց առաջնային պարտականությունների՝ հատկապես Ահարոնյան Քահանայությանը և երիտասարդ կանանց նախագահելու վրա:

Սպասավորությունը փոխարինում է տնային ուսուցմանը և այցելությամբ ուսուցմանը:

Տարիներ շարունակ տնային ուսուցիչները և այցելող քույրերն ամեն ամիս այցելել են անդամների տները, հաղորդել են մի ուղերձ և ըստ անհրաժեշտության օգնել նրանց: Նվիրված ու անձնուրաց ծառայության անթիվ ժամեր են հատկացվել այդ հրաշալի աշխատանքին:

Հիմնվելով այդ նվիրվածության վրա, Եկեղեցու ղեկավարներն այժմ խնդրում են անդամներին մեծացնել հոգեպես և նյութապես ուրիշների մասին Քրիստոսի նման հոգ տանելու իրենց կենտրոնացումը (տես *Ձեռնարկ Բ,* 3.2.3): Այդ հոգատարությունը կարևորելու համար, տնային ուսուցման և այցելող քույրերի նախկին ծրագրերն այժմ ընդհանուր աշխատանք են և կոչվում են «սպասավորություն», որը վերահսկվում է երեցների քվորումի և Սփոփող Միության նախագահությունների կողմից՝ եպիսկոպոսի ղեկավարության ներքո:

9. Ի՞նչ է «սպասավորությունը»:

Փրկիչն Իր օրինակով ցույց տվեց, թե ինչ է նշանակում սպասավորել, երբ Իր Հոր և յուրաքանչյուր անձին ծառայեց սիրուց դրդված (տես Հովհաննես 15.9–10): Նա սիրեց, ուսուցանեց, աղոթեց, մխիթարեց և օրհնեց Իրեն շրջապատողներին, հրավիրելով բոլորին հետևել Իրեն (տես Մարկոս 8.34): Երբ Եկեղեցու անդամները սպասավորեն, նրանք աղոթքով կձգտեն ծառայել Նրա նման՝ «մխիթարելու նրանց ովքեր կարիք ունեն մխիթարության», «միշտ հսկել եկեղեցու վրա, լինել նրա հետ և ամրապնդել այն», «այցելել յուրաքանչյուր անդամի տուն» և օգնել բոլորին դառնալու Հիսուս Քրիստոսի ճշմարիտ աշակերտը (Մոսիա 18.9, ՎևՈւ 20.51, 53, տես նաև Հովհաննես 13.35):

Երբ անդամները սպասավորեն, շփման և ոգեշնչման շնորհիվ նրանք կհասկանան, թե որքան հաճախակի և ինչ եղանակով կարող են հոգ տանել այդ մարդկանց մասին: Եռամսյակը առնվազն մեկ անգամ նրանք կխորհրդակցեն և հաշվետվություն կներկայացնեն իրենց ղեկավարությանը՝ իրենց ծառայության և այն մարդկանց կարիքների և ուժեղ կողմերի վերաբերյալ, որոնց մասին նրանք հոգ են տանում: Սպասավորության այդ հարցազրույցների մասին ղեկավարները կզեկուցեն ամեն եռամսյակ. նրանք այլևս հաշվետու չեն լինի անհատների և ընտանիքների հետ շփումների ու այցելությունների քանակի համար: Բացի այդ, յուրաքանչյուր անդամի հետ քահանայության կրողի կապ հաստատելու շնորհիվ, սպասավորող եղբայրներն ու քույրերը կձևավորեն շփման ցանց, որից ղեկավարները կարող են օգտվել վտանգի կամ արտակարգ իրավիճակների դեպքում:

10. Ինչպե՞ս են կոչվում սպասավորող անդամները:

Քահանայություն կրողները կոչվում են «սպասավորող եղբայրներ», իսկ Սփոփող Միության քույրերը կոչվում են «սպասավորող քույրեր»: Սովորաբար, նրանք պարզապես կկոչվեն իրենց անուններով. «Եղբայր Ջոնս» և «Քույր Սմիթ»: Նրանք չեն կոչվի «սպասավորողներ»:

11. Ինչպե՞ս է սպասավորությունը տարբերվում տնային ուսուցումից և այցելությամբ ուսուցումից:

Սպասավորությունն այնքանով է նման տնային ուսուցմանը և այցելող քույրերի աշխատանքին, որ յուրաքանչյուր ընտանիք կունենա իրեն կցված քահանայության եղբայրներ՝ սպասավորող եղբայրներ, ովքեր կսպասավորեն և հոգ կտանեն ընտանիքների կամ այնտեղ ապրող մարդկանց մասին (տես ՎևՈւ 20.47, 59): Բոլոր չափահաս քույրերին կսպասավորեն և հոգ կտանեն Սփոփող Միության անդամները՝ սպասավոր քույրերը՝ շարունակելով ամրապնդել 2018 թվականի հունվարին մեկնարկած Սփոփող Միության նախագահության կողմից իրականացվող սպասավորության ջանքերը (տես «Շփվեք նրա հետ ցանկացած ժամանակ, ցանկացած վայրում, ցանկացած ձևով» *Ensign* կամ *Լիահոնա,* հուն. 2018, 7):

Բացի այդ, տնային ուսուցման և այցելող քույրերի որոշ պահանջներ ճշգրտվել են, որպեսզի անդամները կարողանան ավելի մեծ ուշադրություն դարձնել

կարիքներին: Այլևս պարտադիր չէ, որ շփումները պաշտոնական լինեն: Դրանք կարող են տեղի ունենալ տանը, եկեղեցում կամ որևէ այլ տեղ, որտեղ ապահով, հարմար և նպատակահարմար է: Ինչպես ուսուցանել է Երեց Ջեֆրի Ռ. Հոլլանդը. «Կարևորն [այն] է, թե ինչպես եք դուք օրհնել և հոգ տարել նրանց համար, ովքեր ձեր ծառայության շրջանակներում են, ինչը գրեթե ոչ մի կապ չունի կոնկրետ օրացույցի կամ որոշակի վայրի հետ: Կարևորն այն է, որ դուք սիրում եք ձեր ժողովրդին և կատարում պատվիրանը «միշտ հսկել Եկեղեցու վրա»:[3]

Մի խոսքով, սպասավորությունն առաջնորդվում է Հոգու կողմից, այն ճկուն է և հարմարեցված է յուրաքանչյուր անդամի կարիքներին:

12.Ինչպե՞ս է սպասավորությունն առաջնորդվում Հոգու կողմից:

Երբ անդամները սպասավորեն, նրանք ոգեշնչում կփնտրեն, որպեսզի իմանան, թե ինչպես լավագույնս օգնեն մյուսներին և բավարարեն նրանց կարիքները: Արդյո՞ք պայմանավորված այցելությունը և կանոնավոր հեռախոսազանգերը տարեց և միայնակ ապրող քրոջ համար կապահովեն անհրաժեշտ կապը: Արդյո՞ք քիչ ակտիվ երիտասարդին համայնքի ծրագրին մասնակցելու հրավերն ամենաօգտակար շփման եղանակը կլինի: Արդյո՞ք երիտասարդների ֆուտբոլային խաղին աջակցելով կօգնեք երիտասարդներին և նրանց ծնողներին: Արդյո՞ք որևէ մեկին սուրբ գրքերից հույսով լի մի հատված ուղարկելով կթեթևացնեք նրա բեռը: Արդյո՞ք որևէ հուշ, բացիկ կամ է-փոստ ցույց կտա օգտակար մտահոգությունը: Ի՞նչ կցանկանար Փրկիչը, որ Իր ծառաներն անեին: Այդպիսի հարցերին ոգեշնչված պատասխաններ գտնելը և իրենց կցված անդամների հետ շփվելու համար բոլոր հնարավոր մեթոդների կիրառումը, կարևոր է ոգեշնչված սպասավորության համար: Քրիստոսանման ծառայություն մատուցելու համար սպասավորող եղբայրներն ու քույրերը չեն կարող ապավինել սովորական այցելություններին կամ կանխորոշված հաղորդագրություններին: Նրանք ոգեշնչում և խորհուրդներ են փնտրում ընտանիքի անդամների հետ, որպեսզի լավագույնս հոգան նրանց մասին, ում կցվել են՝ օգտագործելով ձեռքի տակ ունեցած ժամանակն ու միջոցները:

13.Ինչպե՞ս է սպասավորությունը ճկուն:

Սպասավորող եղբայրներն ու քույրերը հնարավորություն ունեն անելու այն, ինչը լավագույն արդյունքը կտա: Հնարավոր է, որ այն մարդիկ որոնց նրանք կցված են, նույնչափ ուշադրության կարիք չունենան: Եպիսկոպոսության և ծխի խորհրդի հետ աշխատելով, երեցների քվորումի ու Սփոփող Միության նախագահություններն առաջնահերթությունների մասին տեղյակ են պահում սպասավորող եղբայրներին և քույրերին, որպեսզի նրանք հասկանան թե ով նրանց կարիքն առավել շատ ունի: Ամենամեծ առաջնահերթությունը շատ հաճախ տրվում է նոր անդամներին, քիչ ակտիվ անդամներին, ովքեր պատրաստակամ են, և ուրիշներին, ինչպիսիք են միայնակ ծնողները, այրի կանայք և տղամարդիկ: Ղեկավարները կարող են երիտասարդների ղեկավարներին կցել այն ընտանիքին, որտեղ երիտասարդ տղան կամ աղջիկը դժվարություններ ունեն, և նրանք սպասավորող եղբայրներին և քույրերին անմիջապես կցում են նորադարձներին: Այդպիսի սպասավորման համար նրանք կարող են կցել երեցների քվորումի ցանկացած անդամի՝ քահանայապետերի և երեցների:

Եթե նպատակահարմար է, ամուսնացած զույգեր կարող են կցվել ընտանիքներին կամ անհատներին: Բացի այդ, դափնիների և համաստեղության դասարանի քույրերը կարող են Սփոփող Միության քույրերի հետ զուգընկերներ ծառայելով զգալի ներդրում ունենալ, ինչպես նաև քահանաներն ու ուսուցիչները՝ ծառայելով Մելքիսեդեկյան Քահանայություն կրողների հետ (տես հարց 22-ը):

14. Ինչպե՞ս է սպասավորությունը հարմարեցված յուրաքանչյուր անդամի կարիքներին:

Սպասավորող եղբայրներն ու քույրերը փորձում են լավագույնս բավարարել անհատի կարիքները: Շփման բոլոր եղանակները հասանելի են Հոգու հուշումներին արձագանքելու և այն մարդկանց կարիքները բավարարելու համար, ում նրանք ծառայում են: Այդ կարիքները որոշվում են աղոթքով մտածելու և ընտանիքների ու անհատների հետ տեղեկատվական զրույց ունենալու արդյունքում: Այդ զրույցի և հետագա շփումների ժամանակ նրանք լսում են այն մարդկանց, ում նրանք սպասավորում են, որպեսզի հասկանան, թե ինչպես լավագույնս ծառայեն նրանց, որքան հաճախակի և ինչպիսի շփում այդ մարդիկ կնախընտրեն և ինչպիսի ուղերձներով կարող են կիսվել այդ մարդկանց հետ: Սպասավորող անդամները պետք է հավաստիանան, որ ընտանիքի անդամների հետ բոլոր շփումները պատշաճ են:

Սպասավորող եղբայրներն ու քույրերը ձգտում են օգնել անդամներին ու ընտանիքներին նախապատրաստվել իրենց հաջորդ արարողությանը, պահել իրենց կապած ուխտերը և դառնալ ինքնապահով: Այդ օգնության ընթացքում նրանք կարող են կիսվել հոգևոր ուղերձներով՝ հարմարեցված անհատին կամ ընտանիքին, թեև, սպասավորությունը սկզբունքորեն ուղերձներով փոխանակվելու հանձնարարություն չէ: *Լիահոնա* և *Ensign* ամսագրերն այլևս հատուկ ուղերձներ չեն պարունակի սպասավորության շփումներում օգտագործելու համար:

15. Ինչպե՞ս են Մելքիսեդեկյան Քահանայության և Սփոփող Միության ղեկավարները համախմբում իրենց աշխատանքը:

Ուրիշներին սպասավորելու ընդլայնված հնարավորությունը՝ վերականգնված քահանայության քվորումների ավելացած զորության և Սփոփող Միության միասնականության նախատեսված և բնական արդյունքներից մեկն է: Սպասավորությունը դառնում է համակարգված ջանքերից մեկը՝ կատարելու քահանայության պարտականությունը՝ «այցելելու յուրաքանչյուր անդամի տուն» և «միշտ հսկել եկեղեցու վրա, լինել նրա հետ և ամրապնդել այն» և Սփոփող Միության նպատակը՝ «մեծացնելու հավատքը Երկնային Հոր, Հիսուս Քրիստոսի և Նրա Քավության հանդեպ, արարողությունների և ուխտերի միջոցով ամրապնդել անհատներին, ընտանիքներին և տները և միաբանությամբ օգնել կարիքավորներին» (ՎԵՈՒ 20.47, 53, *Զեռնարկ Բ,* 9.1.1):

Աշխատելով միասին և եպիսկոպոսի ղեկավարության ներքո, երեցների քվորումի և Սփոփող Միության նախագահությունները հնարավորություն ունեն ոգեշնչվել, կազմակերպվել և համակարգվել՝ ձգտելով հսկել և հոգ տանել բոլոր մարդկանց և անհատներին: Համակարգումը միասնական աշխատանքն է հետևյալ ձևերով՝

- Երեցների քվորումների նախագահությունները առաջարկում են սպասավորության հանձնարարություններ ծխերի անհատների և ընտանիքների համար: Սփոփող Միությունների նախագահությունները առաջարկում են սպասավորության հանձնարարություններ Սփոփող Միության քույրերի համար: Հատուկ կարիքների դեպքում, երեցների քվորումների ու Սփոփող Միությունների նախագահությունները կարող են քննարկել որոշակի հանձնարարություններ՝ նախքան վերջնական ցուցակներ կազմելը:
- Երեցների քվորումի ու Սփոփող Միության նախագահությունները սպասավորության հանձնարարությունները առաջարկում են եպիսկոպոսի հաստատմանը:
- Անհրաժեշտության դեպքում, սպասավորող եղբայրները և քույրերը կարող են քննարկել անհատների հատուկ հանգամանքները և կարիքի դեպքում դիմել իրենց քվորումի կամ Սփոփող Միության ղեկավարներին՝ լրացուցիչ օգնության և միջոցների համար:
- Երեցների քվորումի և Սփոփող Միության նախագահությունները եռամսյակը մեկ անգամ հանդիպում են և քննարկում անհատների ու ընտանիքների կարիքները, որոնց մասին իմացել են սպասավորության հարցազրույցների միջոցով:
- Այդ հանդիպումից հետո երեցների քվորումի ու Սփոփող Միության նախագահները հանդիպում են եպիսկոպոսի հետ՝ քննարկելու անհատների և ընտանիքների կարիքները:
- Անհրաժեշտության դեպքում, երեցների քվորումի ու Սփոփող Միության ղեկավարները սպասավորության հարցազրույցների ընթացքում հայտնաբերված ուժեղ կողմերի և կարիքների մասին խորհրդակցում են ծխի խորհրդի հետ և կազմում ու իրագործում ծրագրեր, որպեսզի ծառայեն և օրհնեն ծխի անդամներին:

Համակարգումը պարզեցնելու համար, ծուխը կենտրոնանում է ծխի խորհուրդների վրա և այլևս չի անցկացնում քահանայության գործադիր հանձնախմբի ժողովներ: Անհրաժեշտության դեպքում, քահանայության գործադիր հանձնախմբի ժողովներում քննարկված նախկին օրակարգի հարցերը կքննարկվեն եպիսկոպոսության ընդլայնված ժողովների, ծխի խորհրդի կամ եպիսկոպոսի, երեցների քվորումի նախագահի և Սփոփող Միության նախագահի եռամսյակային հանդիպումների ժամանակ:

16.Ինչպե՞ս են անդամները ստանում սպասավորության իրենց հանձնարարությունները:

Ղեկավարները հանդիպում են սպասավորող եղբայրների և քույրերի հետ, նախընտրելի է զույգընկերներով, որպեսզի հանձնարարություններ տան նրանց և խորհուրդ անեն այն մարդկանց ուժեղ կողմերի, կարիքների և դժվարությունների մասին, ում նրանք պետք է սպասավորեն: Այդ զրույցը կարող է տեղի ունենալ սպասավորության հարցազրույցի ժամանակ (տես 20-րդ հարցը) կամ երբ անհրաժեշտ է:

17.Ո՞րն է տնային այցելությունների դերը:

Հաշվի առնելով թվաքանակը, հեռավորությունը, անվտանգությունը և այլ նկատառումներ, յուրաքանչյուր տուն ամենամսյա այցելությունը կարող է անհնար և ոչ գործնական լինել: Այնուամենայնիվ, անձնական այցերը կարևոր են, երբ դրանք կարող են կատարվել: Փրկիչի նման ծառայելու համար սպասավորող եղբայրներն ու քույրերը յուրաքանչյուր հնարավորություն հաշվի են առնում, որպեսզի հոգ տանեն և շփվեն իրենց կցված մարդկանց հետ:

18.Արդյո՞ք սպասավորության ժամանակ միշտ պետք է կիսվել ուղերձով:

Ոչ: Երբ սպասավորող եղբայրներն ու քույրերը ճանաչեն իրենց կցված մարդկանց, նրանք կհասկանան այդ մարդկանց կարիքները և Սուրբ Հոգին կհուշի նրանց ուսուցանելու ավետարանի որևէ սկզբունք: Հնարավոր է, որ ծնողը նույնպես առանձնահատուկ թեմայով ուղերձ խնդրի իր կամ իր ընտանիքի համար: Սակայն, լավագույն «ուղերձը» հոգատարությունն ու կարեկցանքն է:

19.Ինչպե՞ս են սպասավորող եղբայրներն ու քույրերը հաշվետու լինում իրենց ջանքերի համար:

Ղեկավարներն այլևս հաշվետվություն չեն հավաքում ամսվա ընթացքում այցելած ընտանիքների կամ անհատների վերաբերյալ: Փոխարենը, սպասավորող եղբայրներն ու քույրերը հնարավորություն ունեն իրենց երեցների քվորումի և Սփոփող Միության ղեկավարների հետ խորհուրդ անել այն մարդկանց հանգամանքների վերաբերյալ, ում նրանք ծառայում են և իրենց շարունակական սպասավորության ջանքերի վերաբերյալ: Այդ խորհրդակցությունը տեղի է ունենում եռամսյակն առնվազն մեկ անգամ՝ սպասավորության հարցազրույցների ժամանակ և ցանկացած այլ պահի, երբ շփումն անհրաժեշտ է:

20.Ի՞նչ է սպասավորության հարցազրույցը:

Սպասավորության հարցազրույցներն անցկացվում են, (1) որպեսզի խորհուրդ անեն կցված ընտանիքների և անհատների ուժեղ կողմերի, կարիքների և դժվարությունների մասին, (2) որպեսզի որոշեն, թե քվորումը, Սփոփող Միությունը կամ ծխի խորհուրդը ինչ կարիքներ կարող է բավարարել, և (3) որպեսզի ուսուցանվեն ղեկավարների կողմից և խրախուսվեն սպասավորության ջանքերում:

Եռամսյակը առնվազն մեկ անգամ սպասավորող եղբայրները և քույրերը սպասավորության հարցազրույցի ժամանակ հանդիպում են երեցների քվորումի կամ Սփոփող Միության ղեկավարի հետ, նախընտրելի է դեմառդեմ և իրենց զուգընկերոջ հետ: Ամուսնական զույգը, ծառայելով միասին, կարող է հանդիպել կամ երեցների քվորումի կամ Սփոփող Միության ղեկավարի հետ կամ երկուսի հետ: Անհրաժեշտության դեպքում, նախքան հարցազրույցները, սպասավորող եղբայրներն ու քույրերը այլ տեղեկատվությամբ կիսվում են իրար հետ՝ անձամբ կամ հեռախոսազանգերի, տեքստային հաղորդագրությունների, նամակների կամ այլ եղանակների միջոցով: Նրանք գաղտնի տեղեկատվությամբ միայն կիսվում են երեցների քվորումի կամ Սփոփող Միության նախագահի հետ կամ անմիջապես հաղորդում են եպիսկոպոսին:

21. Ինչպե՞ս են ղեկավարները պահում սպասավորության հարցազրույցների գրանցումները:

Երեցների քվորումի և Սփոփող Միության նախագահությունները պահում են այն հարցազրույցների գրանցումները, որոնք անց են կացնում սպասավորող եղբայրների ու քույրերի հետ: Ղեկավարները նշում են, որ ամենամսյա հարցազրույցներն անց են կացվել և ովքեր են մասնակցել այդ հարցազրույցներին: Նրանք զեկուցում են, որ զուգընկերությունն անցել է հարցազրույցը, եթե եռամսյակի ընթացքում զուգընկերներից առնվազն մեկի հետ անց է կացվել հարցազրույցը:

Մինչև 2018 թվականի օգոստոսի 1-ը այդ հաշվետվությունները հասանելի դարձնելու նպատակով ՎՕՍ Գործիքների և Ղեկավարի ու գործավարի ռեսուրսների ծրագրերը կթարմացվեն LDS.org կայքում: Եռամսյակային հաշվետվության փոփոխությունները, նույնպես, հասանելի կլինեն 2018 թվականի կեսերին: Ղեկավարների և գործավարների համար լրացուցիչ մանրամասներ կներկայացվեն Եկեղեցու գլխավոր գրասենյակի առաջիկա ծանուցագրում:

Երիտասարդների ընդգրկումը սպասավորության ջանքերում:

22. Ինչպե՞ս կարող են երիտասարդներն ընդգրկվել սպասավորության հանձնարարություններում:

Ղեկավարները կարող են Սփոփող Միության քույրերի զուգընկերներ նշանակել դափնիների և համաստեղության դասարանի քույրերին այնպես, ինչպես քահանաներն ու ուսուցիչներն այժմ նշանակված են Մելքիսեդեկյան Քահանայություն կրողների զուգընկերներ: Երիտասարդները կիսվում են իրենց յուրահատուկ պարգևներով և աճում են հոգևորապես, երբ փրկության աշխատանքում կողք-կողքի ծառայում են չափահասների հետ, և երբ սպասավորության հարցազրույցների ժամանակ խորհուրդ են հարցնում այդ ծառայության վերաբերյալ: Բացի այդ, երիտասարդներին ներգրավելով սպասավորության հանձնարարություններում և դրանով մեծացնելով մասնակիցների թիվը, ավելանում են ուրիշների մասին հոգ տանելու հնարավորությունները: Դա նաև կարող է պարզեցնել և ամրապնդել այդ ջանքերն ընտանիքներում, երբ մայրերն ու դուստրերը, հայրերն ու որդիները ծառայեն միասին:

23. Արդյո՞ք անհրաժեշտ է, որ երիտասարդներին հատուկ կցված լինեն սպասավորող եղբայրներ և/կամ քույրեր:

Ոչ: Երիտասարդ տղաներին և աղջիկներին սպասավորում են իրենց ընտանիքներին կցված անդամները, ինչպես նաև նրանց մասին հոգ են տանում Ահարոնյան քահանայության և Երիտասարդ Կանանց ղեկավարները:

Քվորումի ճշգրտումները պետք է իրականացվեն անհապաղ: Սպասավորության ջանքերի ճշգրտումները կարող են որոշ ժամանակ պահանջել, բայց պետք է կատարվեն հնարավորինս արագ: Լրացուցիչ տեղեկության համար այցելեք ministering.lds.org/hye**:**

Խնդրում ենք նկատի ունենալ, որ ծխեր և եպիսկոպոսներ հղումները վերաբերում են ճյուղերին և ճյուղերի նախագահներին, ցցերի հղումները վերաբերում են շրջաններին, իսկ ցցերի նախագահներ հղումները վերաբերում են միսիաների և շրջանների նախագահներին:

---

1. Ռասսել Մ. Նելսոն, «Խնդրեք, փնտրեք, թակեք», *Ensign* կամ *Լիահոնա,* նոյ. 2009, 83:
2. Տես Վարդապետություն և Ուխտեր 107.9–12: 11-րդ հատվածում «քահանայապետը» վերաբերում է նախագահող քահանայապետին:
3. Ջեֆրի Ռ. Հոլլանդ, «Եկեղեցու պատվիրակները», *Ensign* կամ *Լիահոնա,* նոյ. 2016, 62: